



ԲՈՒԺԱՆՅՈՒԹԵՐ



EPER



ՕՐԳԱՆԱԿԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐ

ՀՀ-ում Օրգանական մթերքի արտադրության ոլորտը սկսել է զարգանալ 2002թ-ից, երբ Շեն ԲՀԿ-ի և մի շարք միջազգային հովանավորների անմիջական աջակցությամբ հիմնադրվեցին առաջին օրգանական այգիները Հայաստանում՝ Լուսակն և Արգինա համայնքներում: Հետագայում մի շարք տնտեսություններ անցան օրգանական արտադրության համակարգ, առաջատար վերամշակող կազմակերպություններ ստեղծեցին իրենց օրգանիկ տեսականին, սուպերմարկետների ցանցերը սկսեցին ներկրել օրգանական պիտակավորմամբ ապրանքներ, բացվեցին օրգանական ապրանքներ վաճառող մասնագիտացված խանութներ և այլն: Այսօր հայաստանում կա ձևավորված օրգանական արտադրության մի օղակ, որը չնայած փոքր է, սակայն իր որակական բոլոր առանձնահատկություններով, ինչպես նաև սերտիֆիկացման բարձր որակով համարժեք է Եվրոպական արտադրություններին: Հայկական օրգանական արտադրանքը՝ հյութեր, մեղր, պահածոներ, չորացված միրգ, բուսական թեյեր, արտահանվում են Եվրոպական մի շարք երկրներ, ԱՄՆ և ՌԴ:

Այնուամենայնիվ Օրգանական գյուղատնտեսությունը հանդիսանալով նոր ուղղություն ՀՀ-ում աստիճանաբար է զարգանում՝ հանդիպելով մի շարք դժվարությունների, որոնք պայմանավորված են թե արտադրության և թե մատակարարման շուկաների ձևավորմամբ: Օրգանական արտադրություն վարելու համար հարկավոր է գյուղացիական տնտեսությունում ստեղծել ապրանքանյութական արժեքների փակ շրջանառություն, որտեղ ամեն ինչ պետք է համապատասխանի օրգանական սերտիֆիկացման պահանջներին: Տնտեսությունում կամ արտադրության մեջ կիրառվող բոլոր նյութերը պետք է լինեն օրգանական կամ ստանդարտով թույլատրված ծագման: Օրգանական գյուղատնտեսության զարգացման համար հարկավոր է ունենալ օրգանական բուժանյութերի և պարարտանյութերի թե՛ տեսականի, թե՛ շուկայում առկայություն և մատչելիություն, որպեսզի հնարավոր լինի ցանկացած բնակլիմայական պայմանների դեպքում պահպանել արտադրանքի որակը՝ միաժամանակ չխախտելով օրգանական արտադրության պահանջները:

«Շեն» ԲՀԿ հանդիսանալով ՀՀ-ում օրգանական գյուղատնտեսության հիմնադիրը մինչև օրս անվճար խորհրդատվական ծառայություն է իրականացնում՝ օրգանական գյուղատնտեսության վերաբերյալ, բոլոր հետաքրքրված ֆերմերների ու վերամշակողների համար: Սույն գրքույկի կազմման նպատակն է ներկայացնել այսօր հայկական շուկայում առկա օրգանական արտադրության մեջ թույլատրվող պրեպարատների ցանկը: Նպատակ ունենալով սույն գրքույկի օգնությամբ ուղղորդել օրգանական տնտեսություններին հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը:

«Շեն» ԲՀԿ խորհրդատվական խումբ

Պատրաստուկների ծախսի նորման նշված չի, քանի որ յուրաքանչյուր պատրաստուկի ծախսի նորման տարբեր է մշակաբույսերի տվյալ տեսակի համար: Ծախսի նորմաները անհրաժեշտ է ճշտել պատրաստուկը ձեռք բերելիս:

Վերոնշյալ պատրաստուկները օգտագործելուց առաջ պարտադիր պետք է տեղեկացնել և համաձայնեցնել սերտիֆիկացնող մարմնի հետ:

ՖՈՒՆԳԻՑԻԴՆԵՐ

ՖԻՏՈՆԼԱՎԻՆ



Ներբուսային ազդեցության կենսաբանական պատրաստուկ է՝ օժտված սնկասպան և բակտերիասպան ազդեցությամբ: Կիրառվում է բաց դաշտում և փակ գրունտում՝ բակտերիալ և սնկային հիվանդությունների դեմ (արմատային փտումներ «սև ոտիկ», անոթային բակտերիոզ, բակտերիալ քաղցկեղ, գազաթնային փտում, ալտերնարիոզ, բակտերիալ այրվածք, մոնիլիոզ, քոս):

Կիրառման եղանակները. սերմերի նախացանքային մշակություն, սրսկում,

կաթիլային ոռոգում, արմատների ջրում՝ ինչպես հիվանդությունների կանխարգելման, այնպես էլ բուժման համար:

Ֆիտոնլավին® պատրաստուկն արտադրվում է ջրալույծ սուսպենզիայի ձևով, որը հատկապես հարմար է կաթիլային ոռոգման համակարգերով կիրառման համար, քանի որ չի խցանում դրանք: Անվտանգ է էնտոմոֆագերի և փոշոտող միջատների համար: Չի կուտակվում վերջնական արտադրանքի մեջ:

Կիրառվում է՝ լուլիկ, վարունգ (փակ գրունտ) արմատային փտումներ, բակտերիալ փտում, բակտերիալ թառամում, բակտերիալ քաղցկեղ, տերևների անկյունավոր բծավորություն, լուլիկ՝ գազաթնային փտում, ալտերնարիոզ, աշնանացան ցորեն, գարի, արմատային փտումներ, խնձորենի, տանձենի բակտերիալ այրվածք, մոնիլիոզ, քոս, կարտոֆիլ՝ սև ոտիկ, օղակաձև փտում և այլ բակտերիոզներ, ֆիտոֆտորոզ, սև հաղարջ՝ ամերիկյան ալրացող և այլն:



ՔՍԻԼՈՏՐՈՄ




Պատրաստուկը կիրառվում է հողային հիվանդությունների հարուցիչների դեմ պայքարելու համար (*Pythophthora infestans*, *Pythium* spp., *Fusarium oxysporum*, *Rhizoctonia solani*, *Phomosis*, *Anthraco*se, *Sclerotinia*, *Verticillium* etc.)

Չեղուկ պատրաստուկ է՝ ֆերմենտների բարձր կոնցենտրացիայով (ցելյուլազա, խիտինազա, լիպազա, պրոտեազա): Չարստացված է բույսի էքստրակտներից ստացված օրգանական նյութերով, որոնք խթանում և արագացնում են արմատային համակարգի վերականգնումը, երբ վերջինս վնասվում է հողաբնակ սնկային հիվանդությունների հարուցիչներից:

Կիրառվում է ջերմոցներում (լուլիկ, բիբար, ձմերուկ, սեխ, վարունգ), բաց դաշտում (հազար, ելակ, գազար), արևադարձային մշակաբույսերի վրա (բանան, մանգո, ավոկադո, պապայա և այլն), խաղողի և պտղատու ծառերի (խնձորենի, նեկտարինա, հապալաս և բազմամյա բույսեր) վրա:

Կիրառվում է ջերմոցներում (լուլիկ, բիբար, ձմերուկ, սեխ, վարունգ), բաց դաշտում (հազար, ելակ, գազար), արևադարձային մշակաբույսերի վրա (բանան, մանգո, ավոկադո, պապայա և այլն), խաղողի և պտղատու ծառերի (խնձորենի, նեկտարինա, հապալաս և բազմամյա բույսեր) վրա:

ՏՐԻՊԿՈՄ



Պատրաստուկն օգտագործվում է հողաբնակ սնկային հիվանդությունների հարուցիչների դեմ պայքարելու համար, ինչպիսիք են՝ *Botrytis cinerea*, *Pythophthora infestans*, *Alternaria* spp.:

- Սրսկումը պետք է կատարվի 3 փուլով՝
1. ծաղկման փուլում,
 2. երբ միջավայրի ջերմաստիճանը և խոնավությունը բարենպաստ են սնկերի զարգացման համար,
 3. բերքահավաքից առաջ:

Կիրառվում է հետևյալ մշակաբույսերի վրա. ջերմատներում (լուլիկ, բիբար, ձմերուկ, սեխ, վարունգ), բաց դաշտում (հազար, ելակ, գազար), արևադարձային մշակաբույսեր (բանան, մանգո, ավոկադո, պապայա և այլն), խաղողի վազ, պտղատու ծառեր (խնձորենի, նեկտարինա, հապալաս և բազմամյա բույսեր): Կարելի է խառնել ինսեկտիցիդների և պարարտանյութերի հետ, սակայն չի համատեղվում քիմիական ֆունգիցիդների հետ:

ՄԻՄՈՏԵՆ



Օրգանական ծագման սնկասպան և բակտերիասպան պատրաստուկ է՝ ազդեցության լայն սպեկտրով: Արտադրվում է հեղուկ վիճակում: Ազդում է կոնտակտային մեխանիզմով, կիրառվում է բանջարանոցային մշակաբույսերի և պտղատու ծառերի մի շարք հիվանդությունների դեմ բուժող և պրոֆիլակտիկ միջոցների հետ համատեղ:

Կիրառվում է մի շառք սնկային և բակտերիալ հիվանդությունների դեմ:

Բաղադրությունը.

Միմոզայի էքստրակտ.....80 %

ՖԱՆՐԵՍ



Բուսական ծագման հեղուկ օրգանական ֆունգիցիդ և բակտերիցիդ է՝ օժտված ազդեցության լայն սպեկտրով:

Բաղադրությունը.

Միմոզայի էքստրակտ.....60 %

Ֆիտրուսայինների էքստրակտ.....20 %

ԲԱԿՏՈՖԻՏ



Կենսաբանական պատրաստուկ է:

Կիրառվում է սնկային և բակտերիալ հիվանդությունների դեմ (լուլիկի ալրացող, վարունգի ալրացող, խնձորենու ալրացող, արմատային փտումներ, կաղամբի բակտերիոզ, լուլիկի և կարտոֆիլի ֆիտոֆտորոզ և այլն):

ԲՈՐԴՈՅԱՆ ՀԵՂՈՒԿ



- ֆունգիցիդ է:

Կիրառվում է կարտոֆիլի և լոլիկի ֆիտոֆտորոզի և մակրոսպորիոզի, սոխի, ձմերուկի և սոխի կեղծ ալրացողի, վարունգի անտրակնոզի, կեղծ ալրացողի, ասկոխիտոզի, բակտերիոզի, կորիզավոր պտղատեսակների ծակուկեն բծավորության, դեղձենու տերևների գանգրոտության և մոնիլիալ այրվածքի, խաղողի միլդյուի և հատապտուղների սնկային հիվանդությունների դեմ:

ՖՈՒՆԳՈՒՐԱՆ



- ֆունգիցիդ է:

Կիրառվում է ծիրանենու, սալորենու, բալենու, դեղձենու ծակուկեն բծավորության, դեղձենու տերևների գանգրոտության, տանձենու և խնձորենու քոսի, խաղողի վազի միլդյու, վարունգի կեղծ ալրացողի դեմ:

ԿՈՒՊՐՈՔՍԱՏ



- ֆունգիցիդ է:

Կիրառվում է կարտոֆիլի ֆիտոֆտորոզի, ռիզոկտոնիոզի, մակրոսպորիոզի, խաղողի միլդյուի, լոլիկի ֆիտոֆտորոզի, վարունգի կեղծ ալրացողի, գորշ անկյունավոր բծավորության, խնձորենու քոսի դեմ:

ԻՆՍԵԿՏԻՑԻԴՆԵՐ

ՖԻՏՈՎԵՐՍ Ս



Ինսեկտոակարիցիդ

Պատրաստուկն օգտագործվում է բաց դաշտում և փակ գրունտում՝ կոմպլեքս վնասատուների դեմ: Կիրառվում է վեգետացիայի ընթացքում՝ սրսկման եղանակով:

Սահմանափակումները. չի թույլատրվում սրսկումներն իրականացնել քամու և անձրևի ժամանակ, սրսկումից հետո 8-10 ժամ պետք է տեղումներ չլինեն:

Ինչպես բաց դաշտում, այնպես էլ փակ գրունտում պատրաստուկի ազդեցությունը դիտվում է սրսկումից 3-6 ժամ հետո՝ 28-35°C-ի և 8-10 ժամ հետո՝ 18-25°C-ի ջերմաստիճանի պայմաններում: Փոշոտող միջատներին կարելի է բաց թողնել սրսկումից 2 օր հետո: Սպասման ժամկետը՝ 48 ժամ: Խուսափել պատրաստուկի մնացորդներով ջրամբարների ախտոտումից:

Կիրառվում է՝ կարտոֆիլ՝ կոլորադյան բզեզի թրթուրներ, սոխ՝ վիճներ, թրիպս, կաղամբ՝ կաղամբի սպիտակաթիթեռ, կաղամբի ցեց, կաղամբի բվիկ, սմբուկ՝ կոլորադյան բզեզ, խնձորենի՝ խնձորենու և արևելյան պտղակեր, խնձորենու ծաղկակեր, երկարակնճիթ բզեզ, տզեր, վիճներ, վարունգ, լոլիկ, պղպեղ, սմբուկ՝ փակ գրունտ, ոստայնատիզ, դեղձենու և բոստանային վիճներ:



ՆԵՄԱՔՈՒԼ



Բնական պատրաստուկ է, որը պաշտպանում է բույսի արմատային համակարգը նեմատոդների վնասից և խթանում է նոր արմատների աճը: Պատրաստուկը լավ է ներգործում խոնավ հողերում, ուստի կիրառելուց առաջ անհրաժեշտ է տարածքը ոռոգել: Ծախսի նորման հասուն բույսերի համար կաթիլային ոռոգման համակարգով կազմում է 5-8լ/հա: Անձրևացման եղանակով կամ առուններով ջրելու դեպքում պատրաստուկի

ծախսի նորման կազմում է 8-10լ/հա:

Այն հարկավոր է կիրառել նեմատոդի դեմ քիմիական պատրաստուկների կիրառումից մեկ ամիս հետո և չի կարելի համատեղել ֆունգիցիդների հետ: Սրսկումերն իրականացնել 4-6 ամիսը մեկ անգամ՝ կախված մշակաբույսի պահանջներից, հասակից և վարակվածության աստիճանից:

Կիրառվում է ողջ վեգետացիայի ընթացքում՝ հետևյալ մշակաբույսերի վրա.

Արևադարձային մշակաբույսեր (բանանի պլանտացիաներ, ավոկադո, պապայա)

Պտղատուներ (խնձորենի, նեկտարինա, լորամրգի)

Ջերմատներում (լոլիկ, բիրբար, վարունգ)

Բաց դաշտի մշակաբույսերի վրա (հազար, ելակ, գազար)

ՄԻՉՈՒՄ



Բնական պատրաստուկ է՝ ստացված բույսի էքստրակտներից: Կոնտակտ ազդեցության պրեպարատ է, որն ունի բազմակի ազդեցություն.

1. ամրացնում է բույսը՝զերծ պահելով նոր լվիճների վնասից,
2. օգնում է արդեն վնասված բույսին արագ վերականգնվել:

Համատեղելի է շատ օրգանական պատրաստուկների հետ, բացառությամբ պղինձ պարունակողների և քիմիական սնկասպանների, քանի որ վերջիններս կարող են չեզոքացնել պատրաստուկի բնական ակտիվ մոլեկուլները: Խորհուրդ չի տրվում կիրառել վարդերի վրա: Չգայուն տերևներ ունեցող դեկորատիվ բույսերի վրա կիրառելուց առաջ, ցանկալի է խորհրդակցել մասնագետի հետ:

Նախատեսված է տերևային սրսկման համար: Ծախսի նորման 2,5լ/հա, կիրառել երեկոյան՝ արևի ճառագայթների ցածր ինտենսիվության ժամանակ: Քանի որ լվիճները զարգանում և տարածվում են արագ, ցանկալի է պատրաստուկը կիրառել առաջին իսկ նշանների առկայության դեպքում:

Կիրառվում է լվիճների դեմ



ՏԱՐՍՈՒՄ



Արդյունավետ օրգանական պատրաստուկ է ջերմատնային սպիտակաթևիկի դեմ պայքարում: Արդյունավետ է նաև լվիճների, կարմիր տզի, պտղաճանճերի և կարծրաթևերի դասի ներկայացուցիչների դեմ:

Արևադարձային բույսերի էքստրակտից ստացված բնական պատրաստուկ է, որը թունավոր է վնասատուների համար և միևնույն ժամանակ անվնաս տաքարյուն կենդանիների և մարդկանց համար: Պատրաստուկն օժտված է կոնտակտ ազդեցությամբ: Այն կանգնեցնում է եռակարբոնային թթուների ցիկլը՝ շնչառությունը անելով վնասատուներին և ազդելով նրանց նյարդային համակարգի վրա:

Կիրառվում է բույսի տերևների վրա՝ վերևից ներքև սրսկելով:

Ծախսի նորման՝ տերևային սրսկման դեպքում (նախատեսված բոլոր մշակաբույսերի համար) կազմում է 1,5-2լ/հա:

Կիրառվում է հետևյալ մշակաբույսերի վրա. պտղատու ծառեր, ձիթապտուղ, խաղողի վազ, լոլիկ, հազար, կարտոֆիլ, պղպեղ, սմբուկ, կաղամբ, նեխուր, ելակ և այլն:

Պրեպարատը համատեղելի է ֆունգիցիդների և պղնձային պատրաստուկների հետ, քանի որ վերջինները կարող են ոչնչացնել նրա մեջ պարունակվող բնական ակտիվ մոլեկուլները:



ՕԼԵՈՐԳԱՆ



Նիմի հիման վրա ստացված օրգանական պատրաստուկ է: Լայն սպեկտրի միջատասպան է, ճնշում է միջատների զարգացման պրոցեսը՝ ազդելով թրթուրի և հարսնյակի փուլերի վրա: Ազդում է որպես ռեպլենտինհիբիտոր, խոչընդոտում է միջատների սննդառության գործընթացը:

Կիրառվում է արտադրական մշակաբույսերի ավելի քան 100 տեսակ վնասատուների դեմ, նաև նեմատոդների և կեղևա-

կեր միջատների դեմ պայքարում: Կիրառման ընթացքում անհրաժեշտ է ամբողջությամբ մշակել տերևների վերին և ստորին մակերեսները: Չի կարելի խառնել թթուներ պարունակող լուծույթների հետ:

Բաղադրությունը.

Նիմի օճառ.....40 %

ՆԵՄԱԳՈԼԴ



Կալենդուլայի և ծովային ջրիմուռների էքստրակտներից ստացված օրգանական պատրաստուկ:

Կլոր որդերի դեմ կիրառվող կոնտակտ և սիստեմային ազդեցության պատրաստուկ է: Ցուցաբերում է նաև բիոխթանիչ ազդեցություն բույսերի աճի և զարգացման վրա:

Կիրառվում է բույսերի վնասակար նեմատոդների մեծ մասի զարգացումը կանխելու և վերահսկելու համար:

Բաղադրությունը.

Կալենդուլայի էքստրակտ.....80 %

Ծովային ջրիմուռների էքստրակտ.....10 %

ԿԱՆԵԼԻՍ



Դարչինի էքստրակտից ստացված օրգանական պատրաստուկ է:

Դարչինի էքստրակտից ստացված օրգանական պատրաստուկ է, օժտված տզասպան, միջատասպան և սնկասպան հատկությամբ: Կոնտակտ ազդող պատրաստուկ է՝ ցածր մնացորդային քանակությամբ: Փոխում է բույսերի բնական հոտը: Հատկապես արդյունավետ է ալրավոր տզի դեմ պայքարում: Կանելիսն օժտված է նաև

ֆունգիցիդային հատկությամբ՝ արդյունավետ է ալրացողի և այլ սնկային հիվանդությունների դեմ:

Կիրառվում է տզերի, միջատների և սնկային հիվանդությունների դեմ:
Բաղադրությունը.

Դարչինի էքստրակտ.....70 %

ԼԵՊԻԴՈՑԻԴ



Կոնտակտ-ադիքային ներգործության ինսեկտիցիդ է: Ստացվում է *Bacillus thuringiensis* բակտերիաներից:

Կիրառվում է գյուղատնտեսական մշակաբույսերի թեփուկաթևավոր վնասատուների դեմ, այդ թվում մետաքսագործների, երկրաչափերի, տերևալորների, ողկուզակերի, մարգագետնային հրաթիթեռի, կաղամբի սպիտակաթիթեռի, ամերիկյան սպիտակ թիթեռի, ալոնաթիթեռի, բվիկների, ցեցերի դեմ: Խորհուրդ է

տրվում սրսկել երկու անգամ՝ 7-10 օր ընդմիջումով:

ԳՈՒՍԱՆ



Բնական պաշտպանություն տերևակեր վնասատուներից, այդ թվում լուլիկի ցեցից:

Օրգանական սիլիկոնից ստացված կենսաբանական պատրաստուկ է՝ նախատեսված տերևակեր վնասատուների դեմ պայքարի համար: Սրսկելուց անմիջապես հետո պատրաստուկը պատում է տերևի ողջ մակերեսը և ամրացնում պաշտպանիչ թաղանթները: Սնման արդյունքում ներթափանցելով միջատի մարսողական համակարգ՝ սիլիկոնը ռեակցիա է առաջացնում,

ինչի հետևանքով միջատը դադարում է սնվել:

Կիրառվում է մի շարք տերևակեր միջատների դեմ, ինչպիսիք են լուլիկի ցեց, Կարադրիսա, Բամբակենու բվիկ:

Ի շնորհիվ իր հատուկ կառուցվածքի, մնացորդային քանակություն չի թողնում բույսերի մեջ:

Համատեղելի է գրեթե բոլոր պատրաստուկների և պարարտանյութերի հետ, բացառությամբ պղինձ պարունակողների:

ԲԻՏՈՔՍԻԲԱՑԻԼԻՆ



Կենսաբանական միջատասպան է:

Կիրառվում է կոլորադայան բզեզի առաջին և երրորդ հասակի թրթուրների համար, ոստայնատզի, կաղամբի բվիկի, կաղամբի սպիտակաթիթեռի, կաղամբի ցեցի, հրաթիթեռի, խնձորենու ցեցի, պտղացեցի, ալոնաթիթեռի, տերևալորների, մետաքսագործերի, երկրաչափերի դեմ:

Օրգանական գյուղատնտեսության մեջ թույլատրելի են նաև ծծմբային և պղինձ պարունակող այլ բուժանյութեր ևս, ինչպես նաև շատ այլ նյութեր, որոնք բերված են օրգանական գյուղատնտեսության ստանդարտի մեջ:



ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՆՋԱՐԵՂԵՆ



Ֆիտոֆտորոզ



զագաթնային փտում



լուխի ալտերնարիոզ



սև ոտիկ



վարունգի կեղծ ալրացող



վարունգի տերևների անկյունավոր բծավորություն

ՊՏՈՒՂՆԵՐ



բակտերիալ այրվածք



խնձորենու ալրացող



խնձորենու ալրացող



խնձորենու քոս



կորիզավորների ծակոտկեն բծավորություն



կորիզավորների ծակոտկեն բծավորություն



մոնիլիալ այրվածք



պտղափտում



տանձենու քոս

ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐ

ԲԱՆՋԱՐԵՂԵՆ



աշնանացանի բվիկ



բամբակենու կնգուղակեր



լուխի ցեց



լուխի ցեց



կաղամբի բվիկ



կաղամբի սպիտակաթիթեռ



կաղամբի սպիտակաթիթեռ



կաղամբի ցեց



կոլորադյան բզեզ



սպիտակաթնիկ



օղակաձև փտում

ՊՏՈՒՂՆԵՐ



ալոնաթիթեռ



ամերիկյան սպիտակ թիթեռ



արևելյան պտղակեր



լվիճ



ձմեռային երկրաչափ



խաղողի ողկուղակեր



խաղողի ողկուղակեր



խնձորենու ծաղկակեր



խնձորենու ծաղկակեր



տարազույգ մետաքսագործ



խնձորենու ցեց



խնձորենու ցեց



օղակավոր մետաքսագործ



օղակավոր մետաքսագործ